ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՀ ֆինանսների նախարարության 2017 թվականի հոկտեմբեր ամսվա գործունեության վերաբերյալ (հարկային մարմնի մասով)

<u>Ընթացիկ աշխատանքներ</u>

Նախնական տվյալներով 2017 թվականի տասն ամիսների ընթացքում ԱՀ պետական բյուջե մուտքագրված հարկային եկամուտները և տուրքերը կազմել են 30316.8 մլն դրամ՝ պլանավորված 28313.1 մլն դրամ ցուցանիշը գերազանցելով 7.1 տոկոսով կամ 2003.7 մլն դրամով, իսկ նախորդ տարվա նույն ցուցանիշը՝ 23.5 տոկոսով կամ 5764.8 մլն դրամով:

Հոկտեմբեր ամսում ԱՀ պետական բյուջե մուտքագրված հարկային եկամուտները և տուրքերը կազմել են 4103.5 մլն դրամ՝ պլանավորված 4039.7 մլն դրամ ցուցանիշը գերազանցելով 1.6 տոկոսով կամ 63.8 մլն դրամով, իսկ նախորդ տարվա նույն ցուցանիշը՝ 36.9 տոկոսով կամ 1105.2 մլն դրամով:

Հաշվետու ամսվա ընթացքում հարկային մարմնում գրանցվել (հաշվառվել) է թվով 82 տնտեսավարող սուբյեկտ, լուծարվել՝ 2 տնտեսավարող սուբյեկտ:

Կառուցվածքային ստորաբաժանումների կողմից կատարվել է 35 ստուգում, որոնց արդյունքում լրացուցիչ հաշվարկվել են 45.1 մլն դրամ հարկային և այլ պարտադիր վճարների գծով պարտավորություններ, այդ թվում՝ պետական բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության 27 ստուգում՝ 43.4 մլն դրամ գումարով:

Հաշվետու ամսում «Հարկերի վճարումից խուսափելու և հարկային իրավախախտումների դեմ պայքարի» հայեցակարգի շրջանակներում արձանագրվել է պատրաստի արտադրանքի, ապրանքների մնացորդի պակասորդի և առաքվող, տրամադրվող, տեղափոխվող կամ վաճառվող արտադրանքի, ապրանքների թերհայտարարագրման 3-ական ու ապօրինի ձեռնարկատիրական գործունեության իրականացման 1 դեպք:

Նույն ժամանակահատվածում կատարվել են թվով 78 ուսումնասիրություններ, այդ թվում՝ 61-ը՝ հսկիչ-դրամարկղային մեքենաների ներդրման անհրաժեշտության, 6-ը՝

ակցիզային դրոշմանիշների շարժի և դրոշմավորման կանոնների պահպանման, 4-ը՝ ավելացված արժեքի հարկի հաշվարկի ճշտության և 7 այլ ուսումնասիրություններ:

Հաշվետու ամսում ԱՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան է ներկայացվել 78 վարչական գործ՝ 148.3 մլն դրամ գումարով, ավարտվել՝ 44 վարչական գործ, որով բավարարված գումարը կազմել է 84.5 մլն դրամ:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով քննված 103 վարչական գործով սահմանվել է շուրջ 1.6 մլն դրամ վարչական տուգանք:

Հաշվետու ամսում հարուցվել է 1 քրեական գործ, որով պետությանը հասցված վնասը կազմել է 7.5 մլն դրամ:

Հարկ վճարողներին սպասարկող ստորաբաժանումների կողմից ընդունվել և մշակվել է 8927 հաշվարկ-հաշվետվություն, որից էլեկտրոնային եղանակով՝ 7415:

Էլեկտրոնային եղանակով հաշվետվությունների ներկայացման նպատակով հարկ վճարողների հետ կնքվել են թվով 32 պայմանագրեր:

Հիփոթեքային վարկի սպասարկման համար վճարված տոկոսների գումարների չափով վարձու աշխատողների և անհատ ձեռնարկատերերի կողմից վճարված եկամտային հարկի գումարների վերադարձի գործընթացի շրջանակներում կատարվել է վերադարձ 115 վարձու աշխատողի՝ 19.3 մլն դրամի չափով:

Եռամսյա ժամկետով հարկային արտոնություններից օգտվելու նպատակով գործունեությունը նոր սկսող 57 հարկ վճարողների տրամադրվել են հավաստագրեր:

«Արցախի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» օրենքի նախագծով հարկային մարմնին վերապահվող գործառույթների ծրագրային ապահովումն մինչև 2018 թվականի հունվարի 1-ը իրականացնելու նպատակով՝ ֆինանսների նախարարի հրամանով ձևավորվել է աշխատանքային խումբ: Նախարարի մեկ այլ հրամանով փոփոխություն է կատարվել 2014 թվականի մայիսի 12-ի «Հարկ վճարողի հարկային պարտավորությունները ճշգրտելու կարգը և եզրակացության ձևը հաստատելու մասին» N 9-Ն հրամանում:

Հաշվետու ամսում նախարարության երկու մասնագետներ մասնակցել են միջազգային սեմինարների, որից մեկը՝ «Հարկային մարմինների ներեվրոպական» (IOTA) միջազգային կազմակերպության կողմից Շվեյցարիայի Բեռն քաղաքում կազմակերպված «Հարկման բազայի քայքայմանը և շահույթի դուրսբերմանը հակազդելու միջոցների կիրառումը» թեմայով սեմինարին, իսկ մյուս մասնագետը՝ «Տնտեսական համագործակցության և զարգացման» (OECD) միջազգային կազմակերպության կողմից Սլովենիայի Լյուբլյանա քաղաքում կազմակերպված «Ստվերային աշխատանքի շուկան: Որն է խնդիրը և ինչպես լուծել այն» թեմայով սեմինարին: Նախարարության երկու աշխատակիցներ մասնակցել են նաև ՀՀ ԿԱ ՊԵԿ ուսումնական կենտրոնի կողմից կազմակերպված վերապատրաստման դասընթացին, ինչպես նաև ընդգրկվել ՀՀ և ՌԴ ֆինանսների նախարարությունների կողմից երկկողմանի համագործակցության միջոցառումների շրջանակներում կազմակերպված «Տրանսֆերային գնագոյացում՝ օտարերկրյա փորձի վերլուծություն և առաջարկություններ ՀՀ-ի համար» թեմայով դասընթացին:

ՀՀ և ԱՀ հարկային մարմինների միջև իրականացվել են նաև անուղղակի հարկերի հաշվանցումների համար հիմք հանդիսացող փաստաթղթերի, տեղեկությունների փոխանակման աշխատանքներ:

<u>Հասարակայնության հետ կապ</u>

Հարկային մարմնի պաշտոնական ինտերնետային կայքի միջոցով շարունակվել են հանրային իրազեկման աշխատանքները:

«Հարկերի մասին» ԼՂՀ օրենքի 30-րդ հոդվածով սահմանված կարգով հրապարակվել են հարկ վճարողների վերաբերյալ տեղեկատվական ցանկերը:

Հաշվետու ժամանակահատվածում հարկային մարմին է մուտքագրվել 465, ելքագրվել՝ 288 նամակ-գրություն, որոնք ընթացքավորվել են ըստ գործող կարգի, այդ թվում՝ հարկային օրենսդրական դրույթների պարզաբանման նպատակով ներկայացվել է 3 գրություն, որից 1-ը՝ էլեկտրոնային եղանակով: